ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ

ք.Երևան «06» 02 2023թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ԵՊՀ), ի դեմս ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ՀԱԱՀ), ի դեմս ռեկտոր Վարդան Ուռուտյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ՃՇՀԱՀ), ի դեմս ռեկտոր Եղիազար Վարդանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 2023թ-ի 01 «10»-ին Կողմերի միջև ստորագրված համագործակցության հուշագրի դրույթները, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

I. Պայմանագրի նպատակը

1.1. Սույն Պայմանագրի հիմնական նպատակն է Կողմերի միջև կարգավորել աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաների (GIT) ոլորտում հետբուհական բարձրագույն կրթության համատեղ ծրագրի (այսուհետ՝ Համատեղ հետբուհական ծրագիր) մշակումը, իրականացումը, գնահատումը, որակի մշտադիտարկումը, նյութական, ֆինանսական, տեխնիկական ու մարդկային ռեսուրսներով ապահովումը:

II. Պայմանագրի առարկան

Պայմանագրով սահմանված նպատակի իրագործման համար Կողմերը համաձայնվում են.

2.1. Համատեղ հետբուհական ծրագրի ռազմավարական կառավարման համար ստեղծել համատեղ հանձնաժողով՝ յուրաքանչյուր կողմից նշանակելով հանձնաժողովի երկու անդամ: Հանձնաժողովը հաշվետու է Կողմերի ռեկտորներին:

2.1.1. Մշակել Համատեղ հետբուհական ծրագրի հիմնական նպատակները, խնդիրները և ակնկալվող կրթական վերջնարդյունքները, ինչպես նաև այն իրականացման քաղաքականությունը և ընթացակարգերը:

2.1.2. Լրամշակել Էրազմուզ+ GeoTAK նախագծի շրջանակներում մշակված համատեղ հետբուհական ծրագրի նախագիծը (Հավելված 1) և հաստատել յուրաքանչյուր համալսարանի կողմից:

2.1.3. Մշակել և հաստատել սահմանված դասընթացների նկարագիրը՝ համաձայն Էրազմուզ+ GeoTAK նախագծի շրջանակներում մշակված ձևաչափի (Հավելված 2):

2.1.4. Մշակել և հաստատել Համատեղ հետբուհական ծրագրի գնահատման և վերանայման քաղաքականությունը:

2.1.5. Պրոֆեսորադասախոսական կազմը ընտրել և նրանց աշխատանքի վճարում իրականացնել համաձայն Կողմերի գործող քաղաքականության, ընթացակարգերի և կարգերի: Համատեղ հետբուհական ծրագրում ընդգրկվող պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության լրացուցիչ չափանիշները սահմանում են Կողմերը:

2.1.6. Կրեդիտների արժեքը, կրեդիտների և դասախոսների բեռնվածությունը Համատեղ հետբուհական ծրագրում Կողմերի միջև բաշխել հավասարաչափ: Թույլատրելի են շեղումներ 15%-ի սահմաններում՝ կողմերի համաձայնությամբ:

2.1.7. Փաստաթղթավորել Համատեղ հետբուհական ծրագրի ուսումնառողների ամբողջ ուսումնական գործընթացը, փոխճանաչել Համատեղ հետբուհական ծրագրում ստացված կրեդիտները (ECTS)՝ հիմնվելով դրանք հավաստող փաստաթղթերի վրա:

2.1.8. Կազմակերպել Համատեղ հետբուհական ծրագրի ուսումնառողների կրթական գործընթացի վերաբերյալ խորհրդատվական հանդիպումներ, նախապես տեղեկանալ և, անհրաժեշտության դեպքում, լուծել առաջացած կրթական և վարչական խնդիրները:

2.1.9. Ստեղծել համատեղ հանձնաժողով Համատեղ հետբուհական ծրագրի դիմորդների ընդունելության կազմակերպման նպատակով՝ Կողմերի ռեկտորներից յուրաքանչյուրի հրամանի հիման վրա:

2.1.10. Ստեղծել համատեղ հանձնաժողով Համատեղ հետբուհական ծրագրի ուսումնառողների ամփոփիչ որակավորման քննությունների իրականացման համար՝ Կողմերի ռեկտորներից յուրաքանչյուրի հրամանի հիման վրա:

2.1.11. Համատեղ հետբուհական ծրագրի որակի ապահովումը իրականացնել Կողմերի որակի ապահովման համապատասխան ստորաբաժանումների կողմից՝ օգտագործելով որակի ապահովման փոխհամաձայնեցված չափանիշները, ընթացակարգը, ցուցանիշները, ցուցիչները՝ կիրառելով համապատասխան գործիքակազմ:

2.1.12. Համատեղ հետբուհական ծրագրի ուսումնառողներն ուսման վարձը վճարում են այն համալսարանում, որտեղ կատարվել է ընդունելությունը՝ Համատեղ հետբուհական ծրագրի համար տվյալ համալսարանում սահմանված վարձավճարի չափով: Ուսումնական վարձերի վճարների վերջնական հաշվարկները կատարել Կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ՝ լրացուցիչ Պայմանագիր կնքելու միջոցով:

2.1.13. Հնարավորություն ընձեռել Պայմանագրի Կողմեր չհանդիսացող համալսարանների ասպիրանտներին, հայցորդներին և այլ անձանց, վճարովի հիմունքներով, մասնակցել Համատեղ հետբուհական ծրագրի դասընթացներին՝ սահմանելով վերոնշյալ դասընթացների ցանկը և վարձավճարի չափը:

2.1.14. Նպաստել Համատեղ հետբուհական ծրագրի արդյունավետ իրականացմանը՝ ապահովելով անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի (Կողմերի գիտական սարքավորումների, լաբորատորիաների, համակարգչային տեխնիկայի, գրադարանների, գործուղումների իրավունքի, հանրակացարանի և այլնի) օգտագործումը:

2.2. Հաշվի առնելով, որ Համատեղ հետբուհական ծրագիրն իրականացվում է հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում, համատեղ հետբուհական ծրագրի դիմորդ հանդիսացող ասպիրանտների ընդունելության կազմակերպման, հայցորդության ձևակերպման, ասպիրանտների և հայցորդների ուսումնառության դադարեցման, Համատեղ հետբուհական ծրագրից հեռացման և վերականգնման վերաբերյալ հարցերը կարգավորելու նպատակով Կողմերը պարտավորվում են ստորագրել առանձին փաստաթուղթ:

III. Պայմանագրի գործողության ժամկետը

3.1. Սույն Պայմանագիրը ուժի մեջ է ստորագրման օրվանից հինգ տարի ժամկետով: Պայմանագրի գործողության ժամկետը պարբերաբար երկարաձգվում է 5 տարի

ժամկետով, եթե Կողմերի միջև նախապես այլ գրավոր համաձայնություններ չեն հաստատվել:

3.2. Պայմանագրի գործողությունը դադարեցվում է Կողմերի գրավոր համաձայնությամբ:

IV. Եզրափակիչ դրույթներ

4.1 Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն, իրավաբանական հավասար ուժ ունեցող երեք օրինակից, և յուրաքանչյուրին տրվում է մեկ օրինակ:

V. Կողմերի տվյալները

Երևանի պետական համալսարան	Հայաստանի ազգային ագրարային համալսարան	Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան
Հասցե՝ Ալեք Մանուկյան 1, ք. Երևան 0025, Հայաստանի Հանրապետություն	Հասցե՝ Տերյան 74, ք. Երևան 0009, Հայաստանի Հանրապետություն	Հասցե՝ Տերյան 105, ք. Երևան 0009, Հայաստանի Հանրապետություն
Ռեկտոր՝ Հ. Հովհաննիսյան	Ռեկտոր՝ Վ. Ուռուտյան	Ռեկտոր՝ Ե. Վարդանյան

Հավելված 1

Համալսարան	Պարտադիր առարկաներ	ECTS	Կամընտրական առարկաներ	ETCS
ՃՇՀԱՀ	Բարձրագույն գեոդեզիա / Advanced Geodesy	3	Տարածական տվյալների ենթակառուցվածքներն/ Spatial Data Infrastructure	5
	Հետազոտության մեթոդներ / Research Methods	3	Ռեֆերենց համակարգեր / Reference Systems	5
	Մտավոր սեփականության իրավունք / IP Right	2	3D մոդելավորում / 3D Modeling	5
			Շինարարություն և լանդշաֆտ / Construction and Landscape	5
ԵՊՀ	Տարածական վիճակագրություն / Spatial Statistics	3	Տարածական որոշումների աջակցման համակարգեր / Spatial Decision Support Systems	5
	Երկրատարածական ծրագրավորում / Geoprograming (Python)	2	Ամպային տեխնոլոգիաներ / Cloud Technologies	5
	Երկրատարածական ծրագրավորում / Geoprograming (SQL)	2	Երկրատարածական տվյալների հետազոտություն / Geospatial Data Mining	5
			Գեովիզուալիզացիա և թվային քարտեզագրություն / Geovisualization and Digital Cartography	5
ՀԱԱՀ	Հետազոտական հաղորդակցություն և էթիկա / Research Communication and Ethics	3	ԱԹՍ տեխնոլոգիաներ / UAV Technologies	5
	Դասավանդման նոր մեթոդներ / New Teaching Methods	2	Հողային քաղաքականություն և հողերի վերադասավորում / Land Policy and Land Rearrangement	5
			Ճշգրիտ գյուղատնտեսություն / Precision Agriculture	5
			Հողերի կառավարման տեխնոլոգիաներ / Land Management Technologies	5
Ընդհանուր		20		20

40

Հավելված 2

Կրթական ծրագիրը. Աշխարհատեղեկատվական տեխնոլոգիաներ

Որակավորումը. Գիտության թեկնածու **(PhD)**

Դասընթացի անվանումը			
Պատասխանատու դասախոսը			
Դասընթացի տեսակը (պարտադիր/կամընտրական)			
Դասընթացի նպատակը			
Դասընթացի նախապայմանները (եթե կիրառելի է)			
Տևողությունը և կրեդիտները (ECTS Credits)	Կրեդիտ In credits (ECTS)	Ժամ In hours	Կիսամյակ Semester
Կրթական վերջնարդյունքները			
Բովանդակությունը			
Երաշխավորվող գրականությունը և հղումները (հերթականությունն ըստ համապատասխանության կարգի)			
Գնահատման մեթոդներնը և չափանիշները			

NON OFFICIAL TRANSLATION

CONTRACT OF COOPERATION BETWEEN YEREVAN STATE UNIVERSITY (YSU), ARMENIAN NATIONAL AGRARIAN UNIVERSITY OF ARMENIA (ANAU), NATIONAL UNIVERSITY OF ARCHITECTURE AND CONSTRUCTION OF ARMENIA (NUACA)

Yerevan, 6.02.2023.

The Contract of Cooperation is entered into by Yerevan State University (YSU), represented by Rector Hovhannes Hovhannisyan; the National Agrarian University of Armenia (ANAU), represented by Rector Vardan Urutyan; and the Armenian National University of Architecture and Construction (NUACA), represented by Rector Eghiazar Vardanyan, collectively referred to as "the Parties."

Acknowledging the value of partnership and cooperation in Geographic Information Technology (GIT), the Parties recognize their existing collaboration and aspire to enhance it further. They commit to promoting educational, scientific, and cultural exchange, fostering innovation, and knowledge sharing within their institutions and beyond, based on the provisions of the memorandum of cooperation signed on 2023.01.10.

1. Purpose of the Contract

1.1 The main purpose of this Agreement is to regulate the relations between the Parties concerning the development, implementation, evaluation, and quality monitoring of a joint higher education program in Geoinformation Technologies (GIT), providing material, financial, technical, and human resources.

II. Subject of the Agreement

To achieve the specified goal, the Parties agree to:

2.1 Create a joint postgraduate education program for strategic management, establishing a commission with two members from each party, accountable to the rectors.

2.1.1 Develop the main objectives, challenges, expected learning outcomes, and policies for the program.

2.1.2 Finalize and approve the draft program developed under the ERASMUS+ belt project.

2.1.3 Develop and approve course descriptions as per the ERASMUS+ GeoTak project format.

2.1.4 Develop and approve the program's pricing and revision policy.

2.1.5 Select and remunerate teaching staff according to the Parties' policies and additional criteria.

2.1.6 Ensure the equitable distribution of costs and teacher workload, with acceptable deviations by mutual agreement.

2.1.7 Document the educational process and mutually recognize credits (ECTS) based on confirmation documents.

2.1.8 Organize consultative meetings and address educational and administrative issues for program students.

2.1.9 and 2.1.10 Establish joint committees for student admissions and final exams.

2.1.11 Ensure quality assurance of the program with appropriate standards and tools.

2.1.12 Set tuition fees by mutual agreement, with an additional contract for specifics.

2.1.13 Allow non-party universities and individuals to participate in courses for a fee.

2.1.14 Provide the necessary material and technical base for effective program implementation.

2.2 Address the admission, training, and academic progress of postgraduate students through a separate document.

III. Duration of the Contract

3.1 This agreement is valid for five years from the date of signing, with periodic five-year extensions unless otherwise agreed in writing.

3.2 The agreement may be terminated by mutual written consent.

IV. Final Provisions

4.1 This Agreement is drafted in Armenian, in three copies, each having equal legal force, with one copy provided to each Party.

V. Data of the Parties

Yerevan State University

Address: Alek Manukyan 1, Yerevan 0025, Armenia

National Agrarian University of Armenia

Address: Teryan 74, Yerevan 0009, Armenia

Armenian National University of Architecture and Construction

Address: Teryan 105, Yerevan 0009, Armenia